Մէջ ենք բերում մի քանի հատուած այլ եւ այլ տաղերից ընթերցողին ճաշակ եւ գաղափար տալու համար նորա այդ կարգի ստեղծագործութեան մասին.

Հանցգուն զինչ բուսնի տերև և ծաղկի գա-
րունն ի ծառէն,
Տր. իմ ծաղկեցոյ հոգւով զիս ի սէր քո
ածելէն։

Հանցգուն զինչ աշնան քամին, որ թափէ
զտերևն ի ծառէն,
Հոգւով մեղանաց իմոց զրկեցայ յանանց
պսակէն։

Հանցգուն զինչ հանեն մարդիք հնարիւք
ըզձուկն ի ծովէն,
Որ պահ մի տեւանը տայ, մեռանի կա-
րօտ ի ջրէն,

Հանցգուն զինչ ելնէ ժամ ժամ թանձրա-
ցեալ թուխ ամպն ի ծովէն,
Որ յորդամանէ նորա սասանի ամէն մըսե-
ղէն,

Ես արտաքսեցայ մեղաւք իմաստից անհուն
քո ծովէն,
Հոգիս թալկացաւ դէմ քեզ, զիս կեցոյ,
անհալդ ի կուսէն(*)։

* * *

Աշխարհս էր ի ծով նըման
Զիս ի վայր տարաւ յանդիման,
Կենցաղս էր յալեաց նըման
Զիս ի մէջ էառ քան (ըզ) զընտան.

Սէրն էր անդընդոց նըման
Զիս ի վայր քաշեց փոշիման
Աւուրքս էր ծաղկի նըման
Որ անցաւ յերազ ի նըման։

. . . . . .

Խաչատուր, զարթի՛ր ի քնոյ,
Չի քեզ ժամ է աշխարհելի.

Այս կեանքն է ձիւնի նըման,
Որ ի գալ գարնան կու հալի։

. . . . . .

Ծաղկեալ ես տերև ունիս
Այտից ալ շուտով տի թափիս.
Կանաչ ես վայելչ կենաւք,
Փոփոխի գոյնդ եւ շուտ մեռանիս։

. . . . .

Հիւանդ եմ, ի տես եկէք,
Մխթէ դեղ առնէք խոցերուս.
Ա՛հ ու դող պատեց զհոգիս,
Պատճառ զի՞նչ դնեմ տանողիս(*)։

Կեչառեցին ըստ Պատկանեանի մեռել է 1331 *թուին(**)։ Նորա գերեզմանը ցոյց է տրւում բոլորովին մի այլ տեղ, քան ենթադրել կարելի էր. մի Աշխարհացոյց, որ յայտնի է ընդհանրապէս Վարդանի անունով, բայց որը ԺԴ. դարի կնիք կամ յաւելուածներ է կրում, Արշարունիքի եւ Երասխաձորի նշանաւոր վայրերի և վանքերի հետ յիշում է նաև «Կեչրոր քաղաքն և Ծառաքարն ի վիմափոր վանքն, ուր կա գերեզման Կեչառեցի Խչատուր վրդպտին»(***)։*

ԺԴ. դարի վերջերից այլ եւս արձանագրութիւնները լռում են Կեչառիսի մասին, մի երեւոյթ, որ գրեթէ, ընդհանուր է դառնում հետզհետէ Մեծ Հայքի և միւս վանքերի համար. մահմեդական անողոք լուծի տակ սկսում է նսեմանալ հայ կրօնական եւ հոգեւոր—քաղաքակրթական կեանքը. կեղեքումներն ու հալածանքները ու խիստ հարկապահանջութիւնը աղքատացնում են ժողովրդին, որի մասին ողբում է արդէն Կեչառեցին՝ «յաղքատութիս. որ ժամանեցաք», և սրանց հետեւանքով էլ պակասում են նուիրաբերութիւնները, որոնց հետ կապուած էր արձանագրութիւնների յաճախութիւնը. ԺԴ. դարի կէսերից թուականով միայն մի արձանագրութիւն ունինք ոմն Սարգսի տափակ գերեզմանաքարի վերայ, որ «Կի-

(*) *Առնուած է «Ես եմ կորուսեալ ոչխար» բանաստեղծութիւնից. տպագրուած Տէվկանց. Հայերգ. եր.* 141։ *Ձեռ. էջմ.* № 3081, 40*ա.*։ № 934, 129*ա. և* № 2676, 123*բ. «Տաղ Կեչառեցոյ ասացեալ»։ Բայց մի ձեռագրում՝* № 962 *Հժ.,* 385*բ., վերնագրուած է. «Յոհաննէս քաղցրաձայնի ասացեալ Երզնկեցոյ»։*

(*) *Ձեռ. էջմ.* № 2676. 180*բ.,* 181*ա.*։ № 3081. 84*բ.,* 85*ա.,* 85*բ., «Թէ մարդ ես, ու միտք ունիս» ոտանաւորից։*

(**) *Բազմավէպ. Սիոն։*

(***) *Ձեռ. Լիմից բերուած* № 358։ *Կեչրոր քաղաքը յիշում է Վարդան, Մոսկուա,* 1861, 171 *և* 173։ *Կեչրոր քաղաքում նահատակուեցաւ ոմն տէր Առաքել ՈԾԷ* (= 1208) *թուին՝ Մարգարէ միայնաւոր քահանայի աշակերտ Գրիգորիսի Խծկոնից վանքում կանգնած խաչքարի արձանագրութեան համեմատ։ Գրի առնուած և վերստուգուած մեր կողմից. տես և Սարգսեան. Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս,* 1864, 212։ *Ալիշան, Շիրակ,* 129։ *Իսկ Գրիգոր Կեչրորցին նահատակուել է* 1222 *թուին, Այր.* 47։